



ԲԱՐԻ ԳՈՐԾԸ ՎԱՐԱԿԻՉ Է

Ժամանակին Կարին անունով երիտասարդ աղջիկ մը կար, որ շատ կը սիրեր օգնել ուրիշներուն: Ան կ'ապրեր գիւղակի մը մէջ, ուր բոլորը կը ճանչնային զիրար եւ պետք եղած ժամանակ կ'օգնէին իրարու:

Օր մը Կարին լսեց, որ իրենց գիւղին մէջ ծեր մարդ մը անտառին խորը լքուած տան մը մէջ առանձին կ'ապրեր եւ ամէն օր դժուարութեամբ կը փորձեր ինքզինքին հոգ տանիլ: Կարին որոշեց այցելել եւ տեսնել, թէ ի՞նչ ձեւով կրնար օգնութեան հասնիլ անոր:

Երբ ծերունիին տունը հասաւ, զինք տան շէմին նստած գտաւ: Ան տխուր եւ միևնաէկ էր: Կարին մօտեցաւ, նստաւ անոր քով եւ սկսաւ իր հետ խօսիլ: Ան իմացաւ, որ ծերունին ընտանիք չունէր եւ երկա՛ր տարիներէ ի վեր առանձին կ'ապրեր:

Կարին գիտեր, որ պետք էր ամէն ինչ ընել՝ ծերունիին օգնելու համար: Ան մտածեց ամէն օր զինք այցելել, ուսելիք բերել, տունը մաքրել եւ անոր ընկեր դառնալ:

Յաջորդ քանի մը շաբաթներուն ընթացքին, Կարին ամէն օր կ'այցելէր ծերունիին: Ան իր պատեզէն թարմ պտուղներ եւ բանջարեղէններ կը բերէր, տունը կը մաքրէր ու ժամերով կը զրուցէր անոր հետ իր կեանքին մասին:

Որքան ժամանակ անցնէր, ծերունին այնքան աւելի Կարինին կ'արտայայտէր իր զգացումները ու սրտին մօտ կը զգար անոր: Անոր կը պատմէր իր երիտասարդութեան, ընտանիքին եւ այն բոլոր արկածներուն մասին, որոնք ապրած էր իր ողջ կեանքին ընթացքին: Կարին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր ծերունիին եւ կարծիքներ կը փոխանակէր անոր հետ:

Օրե՛ր կ'անցնէին: Օր մըն ալ երբ Կարին ամէն օրուան պէս ծերունիին կ'այցելէր, կը տեսնէ զինք անկողինին մէջ քնացած, խաղաղ կեանքէն հեռացած: Բայց ան մահանալէն մէկ օր առաջ Կարինին ըսած էր, թէ որքա՛ն երախտապարտ էր իր բարութեան եւ այդ մէկը մեծ նշանակութիւն ունէր իրեն համար, որովհետեւ իր կեանքին վերջին օրերուն առանձին չէր մնացած:

Կարին հասկցաւ, որ ուրիշներուն օգնելը կարելոր է մեր կեանքի ընթացքին: Հոգ չէ, թէ այդ գործերը ըլլան մեծ թէ փոքր: Կարելորը այն է, որ մենք կարեկցութիւն ցուցաբերենք մարդոց հանդէպ:


Այնուհետեւ Կարին միշտ շարունակեց օգնել ուրիշներուն, որքան որ կարող էր, տարիներ շարունակ բարութիւն տարածելով իր գիւղին մէջ, հաւատալով՝ որ ԲԱՐԻ ԳՈՐԾԸ ՎԱՐԱԿԻՉ Է:





ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇՈՇԵԱՆ





Իւրաքանչիւր ժամացոյցի մօտ ճշգրիտ ժամանակը արձանագրէ՛:


1  _____

2  _____

3  _____

4  _____







5  _____

6  _____


Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներովդ:



Կրնա՞ս լուծել:

| | |
|---|---|
|  $\frac{2}{2} = \frac{\quad}{4}$ |  $\frac{4}{8} = \frac{\quad}{2}$ |
|  $\frac{3}{4} = \frac{\quad}{8}$ |  $\frac{2}{3} = \frac{\quad}{9}$ |
|  $\frac{4}{12} = \frac{\quad}{6}$ |  $\frac{1}{5} = \frac{\quad}{10}$ |

Կրնա՞ս օգնել մեղուին, որպէսզի հասնի իր սիրելի ընկերներուն:



Պատասխանը:
 1) 2) 3) 4) 5) 6)
 4 1 6 9 2 2

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՅՐԱՅԱՆԸ

Պայուսակը՝ կռնակին եւ սուրը՝ կողին, զինուորը հպարտօրէն սկսաւ քալել դէպի տուն:

Ահաւասիկ ան կը վերադառնար հայրենիք՝ անոր համար կռուելէն ետք:

- Ինչպիսի՜ քաջ զինուոր եւ ինչպիսի՜ կտրող սուր...

Մէկը այսպէս բացագանչեց: Չինուորը ետ դարձաւ եւ տեսաւ, որ այս խօսքերը արտասանողը վիուկ մըն է:

Տակաւին անոր չպատասխանած՝ վիուկը շարունակեց,

- Քովս շատ դրամ կայ: Եթէ ուզես՝ քեզի կու տամ... Նայէ՛, կը տեսնե՞ս այս փորուած ծառը, ներքը գանձ մը կայ: Գանձ մը, որ թէ՛ քեզի, թէ՛ ինծի, յաւիտեան կը բաւէ: Եկո՛ւր, մէջքդ պարանով մը կապեմ եւ իջիր այդ փորուած ծառին մէջ:

Չինուորը հարցուց.

- Ի՞նչ պէտք է ընեմ ծառին բունին մէջ:

- Ծառին մէջ, - բացատրեց վիուկը, - երկար նրբանցք մը կայ: Երբ հասնիս նրբանցքին վերջաւորութեան, դիմացդ երեք դռներ պիտի երեւին: Իւրաքանչիւր դռնտարբերսենեակ մը

կը տանի: Ամէն սենեակի մէջ շուն մը պիտի գտնես, որ նստած է սնտուկի մը վրայ: Առաջին շունը, որուն աչքերը գաւաթի տեսք ունին, կը հսկէ պղինձէ դրամին վրայ, երկրորդ շունը, որուն աչքերը մարմարէ քարի կը նմանին, կը հսկէ արծաթէ դրամին վրայ: Երրորդ շունը, որուն աչքերը կլոր աշտարակի կը նմանին, կը հսկէ ոսկի դրամին վրայ: Բայց յաջողելու համար, սիրելի՛ զինուորս, պէտք է վախնաս:

Ահաւասիկ զարդարուած, կապոյտ քառակուսիներով քօղ մը: Ա՛ն այս քօղը, գայն գետնին վրայ տարածե՛լ եւ համարձակ մօտեցի՛ր շան: Առանց վախնալու վերցո՛ւր շունը, դի՛ր քօղին վրայ: Երբ այս ընես, պիտի տեսնես որ նախընտրած սնտուկդ ինքնաբերաբար պիտի բացուի: Այդ ժամանակ ուզածիդ չափ դրամ կ'առնես ու ետ կը դառնաս:

Չինուորը, որ ուշադրութեամբ կը հետեւեր վիուկին բացատրութիւններուն, հարցուց.

- Ի՞նչ պէտք է ընեմ, որ կարենամ դուրս ելլել:

- Վերջին սնտուկին քովի հրահանը կ'առնես եւ այդ ժամանակ կրնաս հոս գալ: Չմոռնա՛ս հրահանը:

- Կապե՛ զիս, համոզուեցաւ քաջ զինուորը: Պատրաստ եմ ծառին բունին մէջ մտնելու:

Երբ զինուորը իջաւ ծառին բացուածքէն վար, տեսաւ երկար նրբանցք մը, որ լուսաւոր էր: Կարծեք հարիւրաւոր լամբեր կը փայլէին: Չինուորը առանց վախի մօտեցաւ երեք դռներուն, եւ հատիկ-հատիկ մտաւ այդ երեք սենեակները: Ինչպէս վիուկը իրեն ըսած էր, իւրաքանչիւր սենեակի մէջ խոշոր շուն մը կար: Այդ շուները դրաւ քօղին վրայ, գրպանները, պայուսակը, գլխարկը եւ նոյնիսկ մինչեւ ծունկ հասնող կօշիկները դրամով լեցուց:

Երբ վերջին սենեակին հասաւ, չմոռցաւ, ու վերցուց նաեւ հրահանը ու ծառի ճեղքին վերադառնալով դուրս ելաւ:

Վիուկը որ իրեն կը սպասէր, ըսաւ.

- Ի՞նչ պիտի ընես այդ հրահանը, տղա՛ս: Դուն ազնիւ երիտասարդ մըն ես. գայն ինծի՛ տուր:

Չինուորը բարկութեամբ պատասխանեց.

- Ե՛ս յոգնեցայ այսքան բան բերելու համար: Յրահանը ինծի պիտի պահեմ՝ որպէս յիշատակ: Եթէ անգամ մըն ալ բերանդ բանաս, քեզ կը սպանեմ:

Վիուկը վախցաւ ու փախաւ:

Չինուորը այսպէս հարստացած եւ առանց բանէ մը վախնալու, երգելով իր ճամբան շարունակեց, դէպի քաղաք:

(Շարունակելի)



ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ

ԾՓԱՅՈՂ ՀԱԿԻԹԻՆ ՓՈՐՁԸ

1. Ամանի մը մէջ ջուր լեցնել եւ ատելցնել քանի մը կաթիլ ուտելիքի ներկ, որպէսզի ջուրին տեսքը ատելի հետաքրքրական դառնայ:
2. Չգուշօրէն հաւկիթ մը դնել ջուրով լեցուն ամանի մը մէջ:
 - Դիտենք, թէ ի՞նչ պիտի պատահի հաւկիթին, երբ ան դրուի ջուրի ամանին մէջ: (Ան պետք է ընկղմի):

Իսկ այս անգամ՝

1. Հաւկիթը ջուրէն հանել:
2. Մէկ ճաշի գդալ աղ ատելցնել նոյն ամանին մէջ եւ լաւ մը խառնել, մինչեւ որ լուծուի ջուրին մէջ:
3. Վերադարձնել հաւկիթը ամանին մէջ:
 - Դիտենք, թէ այս անգամ ի՞նչ պիտի պատահի: (Հաւկիթը պետք է ծփայ ջուրին մակերեսը):

Ինչո՞ւ համար առաջին փորձին, հաւկիթը ընկղմեցաւ ջուրին յատակը, իսկ երկրորդ անգամ, ան ծփաց ջուրին երեսը:

Եզրակացութիւն:

Աղը կը բարձրացնէ ջուրին թանձրութիւնը: Այսպիսով ջուրը կարողութիւն կ'ունենայ հաւկիթին ծանրութիւնը պահելու եւ կը ստիպէ անոր ծփալ ջուրին երեսը:

